ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 21 դեկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 12:30

2023 թվականի մարտի 13-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի վարչական շենքում կայացավ Վաղարշապատ համայնքի վարչական **««Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման** նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Մ. Պողոսյան - Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական Մարիամ Պողոսյանը: Ողջունելով ներկաներին՝ Մ. Պողոսյանը հրավիրեց Վաղարշապատ համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանին՝ ներկայացնելու **«Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման** նախագիծը:

Լ. Քալաշյան - Բյուջեի նախագիծը կազմելիս օգտագործվել են Կառավարության կողմից սահմանված խորհրդատվական բնույթ կրող հաշվարկային նորմատիվները:

Եկամուտների և ծախսերի հաշվարկման ու ներկայացման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարել համայնքապետարանի բաժինները, համայնքապետարանին ենթակա ստորաբաժանումները:

Բյուջեի կազմման համար անհրաժեշտ տվյալների մի մասը ստացվել է վիճակագրական վարչության Վաղարշապատի ստորաբաժանումից, պետ. նոտարական գրասենյակից և այլ կազմակերպություններից:

2024թ. բյուջեի նախագծով նախանշված ուղղությունները բազմազան են: Դրանով նախատեսված են նախադպրոցական հաստատությունների, մարզադպրոցի, մշակույթի օբյեկտների պահպանմանը, դրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը ուղղված աշխատանքները: 2024թ. կշարունակվեն նախակրթարանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները:

Նախատեսվում է ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը: Սպորտի բնագավառում ուշադրություն կդարձվի սպորտի մասսայականության բարձրացման խնդրին:

2024թ. ուշադրության կենտրոնում կլինեն համայնքի ասֆալտապատման, կանաչապատման, լուսավորության, աղբահանության հարցերը:

Նախատեսվում է ընդլայնել համայնքի կանաչապատ տարածքները՝ հիմնելով նոր այգիներ, պուրակներ: Որպես գերակա ուղղություն է համարվելու բակային տարածքներում կանաչապատ զոտիների և խաղահրապարակների հիմնումը:

Նախագծում նախատեսված է պահուստային ֆոնդ, որի միջոցները ուղղվելու են տարվա ընթացքում ի հայտ եկած չկանխատեսված ծախսերի, անհրաժեշտության դեպքում նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման, ինչպես նաև ֆոնդային բյուջե հատկացումների իրականացման համար:

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն քաղաքի 2024թ. բյուջեն բաժանված է 2 բաղկացուցիչ մասերի՝

- քաղաքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/ և
- քաղաքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/

Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:

Բյուջեի եկամուտների /ծախսերի/ կանխատեսման և դրանց նախահաշիվների կազմման աշխատանքներն իրականացվել են վարչական և ֆոնդային բյուջեների համար առանձին-առանձին:

Բյուջեի նախագծում նախատեսված եկամուտները հիմնավորված են <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով և բխում են միջնաժամկետ ծախսերի ծրագրից:

Բյուջեի եկամտային մասում ընդամենը նախատեսվել են հարկեր և տուրքեր 663805.4 հազ. դրամի չափով:

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսվում է տարվա ընթացքում հավաքագրել 453410.0 հազ. դրամ:

Համայնքային ենթակայության գույքի և հողի օտարումից մուտքեր է նախատեսվում 150000.0 հազ. դրամ:

Նախագծում ներառվել է նաև ՀՀ Կառավարության կողմից Վաղարշապատի համայնքին համահարթեցման սկզբունքով 2024թ. համար հատկացված 1206504.2 հազ. դրամի չափով դոտացիա, սուբվենցիաներ՝ 3050.4 հազ. դրամի և պատվիրակված լիազորություն՝ 5997.0 հազ. դրամի չափով:

Ընդամենը նախատեսվում է 2024թ. ընթացքում հավաքագրել եկամուտ՝2332767.0 հազ. դրամ, որից՝ սեփական եկամուտներ 1117215.4 հազ. դրամ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով **Վաղարշապատի համայնքի Ավագանուն առաջարկվելու է**

1. Վարչական բյուջեում եկամուտները սահմանել հետևյալ չափերով.

ա/ անշարժ գույքի հարկ	90000.0 հազ. դրամ
բ/ գույքահարկ փոխադրամիջոցներից	410000.0 հազ. դրամ
գ/ գույքահարկ շինություններից	15000.0 հազ. դրամ
դ/ հողի հարկ	15000.0 հազ. դրամ
ե/ պետական տուրք	34000.0 հազ. դրամ
զ/ տեղական տուրքեր	99805.4 հազ. դրամ
է/ այլ ոչ հարկային եկամուտներ	453410.0 հազ. դրամ
ը/ դոտացիա պետ. բյուջեից	1206504.2 հազ. դրամ
թ/ պատվիրակված լիազորություն ՔԿԱԳ	5997.0 հազ. դրամ
ժ/ սուբվենցիա	3050.4 հազ. դրամ
Ընդամենը վարչական մասի եկամուտներ	**2332767.0 հազ. դրամ**

2. Վարչական բյուջեում ծախսերը սահմանել հետևյալ չափերով.

ա/ համայնքապետարանի պահպանման ծախսեր	356600.0 հազ. դրամ
բ/ կրթության համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	533203.3 հազ. դրամ
գ/ մշակույթի համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	325495.4 հազ. դրամ
դ/ սպորտի համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	133270.0 հազ. դրամ

ե/ բնակ-կոմունալ վարչության ծախսեր	57352.3 հազ. դրամ
զ/ աղբահանում և սանմաքրում	321933.8 հազ. դրամ
է/ բարեկարգման համակարգի ֆինանսավորման ծախսեր	204500.0 հազ. դրամ
ը/ փողոցների լուսավորում	80000.0 հազ. դրամ
թ/ ճանապարհային տրանսպորտ	50000.0 հազ. դրամ
ժ/ քաղաքացիական պաշտպանություն	3000.0 հազ. դրամ
ի/ գյուղատնտեսություն	2500.0 հազ. դրամ
լ/ համաքաղաքային միջոցառումների ծախսեր	20000.0 հազ. դրամ
խ/ կրթական, մշակութային և սպորտային նպաստներ	15000.0 հազ. դրամ
ծ/ սոցիալական ֆոնդ	25000.0 հազ. դրամ
կ/ այլ կապիտալ դրամաշնորհ	960.0 հազ. դրամ
հ/ պահուստային ֆոնդ	203952.2 հազ. դրամ

Ընդամենը վարչական մասի ծախսեր 2332767.0 հազ. դրամ

3. Ֆոնդային բյուջեում նախատեսել համայնքային ենթակայության գույքի և հողի օտարումից մուտքեր **150000.0 հազ. դրամ**:
4. Ֆոնդային բյուջեի ծախսային մասում նախատեսել՝

ա/ համայնքապետարանի պահպանման ծախսեր 20000.0 հազ. դրամ

բ/ ճանապարհային տրանսպորտի ծախս 130000.0 հազ. դրամ

Ընդամենը ֆոնդային մասի ծախսեր 150000.0 հազ. դրամ:

5. Բյուջեի վարչական և ֆոնդային մասերում նախատեսված եկամուտների գերակատարման դեպքում համայնքապետի որոշմամբ նշված գումարները պլանավորել որպես եկամուտ և այն ուղղել անհրաժեշտ ծախսային հոդվածներին:
6. Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա չնախատեսված ծախսերի համար միայն համայնքի ավագանու որոշմամբ:
7. Համաձայնություն տալ Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
8. Վաղարշապատի համայնքի 2024թ. բյուջեի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50.0 % չափաքանակ:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ-ի հունվարի 1-ից:

Հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Որոշում

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում վարչական **«Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Վաղարշապատ համայնքի**

ավագանու որոշման նախագիծը. որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Զեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան Ա.Պետրոսյան
Քննարկման վարող՝ Լ. Քալաշյան
Արձանագրող՝ Մ. Պողոսյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

ՑԱՆԿ

Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին
հանրային քննարկման մասնակիցների

	անուն/ազգանուն	Էլ.հասցե	հեռախոսահամար	ստորագրություն
1.	Մհեր Մկրտչյան	mmmher@mail.ru	093121286	[signature]
2.	Կարեն Սմբատյան	Karen.smbatyan1989@mail.ru	077161717	[signature]
3.	Հրաչյա Ավետիսյան	hrachavetisyan57@gmail.com	094194000	[signature]
4.	[illegible]	kar-yes@mail.ru	094 04 61 18	[signature]
5.	Վարդան Գրիգորյան	vardangrigoryan@ejmiatsin.com	093 37-39 28	[signature]
6.	[illegible]	-	091107100	[signature]
7.	Արսեն [illegible]	arsenp83@mail.ru	077320663	[signature]
8.	[illegible]		077-07-77-82	[signature]
9.	[illegible]	—	093 60 88 45	[signature]
10.	[illegible]	consultant.vt@mbo.gov.am		[signature]
11.	Լուսինե Գալաշյան	lusine.galashyan@mail.ru	093566651	[signature]
12.	Գրիգոր [illegible]	law.grigor@gmail.com	077-96-98-38	[signature]
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				